Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ներառական կրթություն: ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական թղթապանակ

Ուսուցիչ՝ Լուսինե Հովհաննիսյան

Ղեկավար՝ Ա. Խալաթյան

Եղեգնաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1. 6
1 ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄ 6
1.1 ՆԵՐԱՌՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ 9
Գլուխ 2. 11
ԵՐԵԽԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14
Գրականության ցանկ 16

Ներածություն

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), համաձայն որի հանրակրթության համակարգում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության: Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: Սա մի գործընթաց է, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին՝ անկախ նրանց ունեցած հաշմանդամության տեսակից և սոցիալական վիճակից:

Ըստ օրենքի կիրառման ԿԱՊԿՈՒ երեխան մանկավարժահոգեբանական աջակցություն կստանա երեք մակարդակում՝ հանրակրթական դպրոցում , ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Օրենքում ամրագրվել է նաև ,որ հատուկ դպրոցները պետք է վերակազմակերպվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք կաջակցեն հանրակրթականդպրոցներին՝ կազմակերպելու համար կրթության առանձնահատկուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը:

Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունը պետք է հասնի օրենքով սահմանված համընդհանուր ներառմանը: Ներառական կրթության կազմակերպման կարևոր բաղադրիչ մաս է կազմում բոլոր, այդ թվում նաև՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող թիմի ստեղծումը, որն իր մեջ ներառում է երեխայի կրևթությամբ հետաքրքրվող տարբեր մանկավարժական աշխատողների (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ և այլն):

Յուրաքանչյուր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտի կրթությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակվում է անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ): Հավաքվում է ԿԱՊԿՈՒ աշակերտների

անհատական թղթապանակ, որում ցույց է տրվում նրանց ցանկացած նույնիսկ չնչին հաջողությունները:

Այսօր ներառական կրթություն ասելով հասկանում ենքյուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:

Հետազոտական թեմայի արդիականությունը

Իմ կատարած հետազոտության արդիականության հիմք է հանդիսացել ՀՀ հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ սովորողների համընդհանուր ներառումը:

Երբ յուրաքանչյուր երեխա դպրոց է ընդունվում, ապա նրա համար պատրաստում են անհատական թղթապանակ՝ անհրաժեշտ փաստաթղթերով: Քանի որ բոլոր երեխաների համար ընձեռվում է հավասար իրավունքներ ,ապա ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նույնպես պատրաստվում է անհատական թղթապանակ, որը իր մեջ բացի անձնական տվյալներից, ներառում է նաև երեխաների անհատական տեսանյութեր, լուսանկարներ, որտեղ երևում է երեխաների աճն ու զարգացումը, գրանցած առաջընթացը: Թղթապանակի համար պատասխանատու է դպրոցի փոխտնօրենը, ով պետք է իմանա և կարևորի թղթապանակի առկայությունը յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտի համար:

Հանրակրթական դպրոցներում ներառված յուրաքանչյուր երեխայի անհատական թղթապանակից ելնելով՝ երևում է, թե ինչպես է տվյալ դպրոցը ինչպես է կազմակերպում աշխատանքները ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

Հետազոտության նպատակը

- Խորապես ուսումնասիրել համընդհանուր ներառումը,
- ուսումնասիրել և յուրաքանչյուրին իրազեկել ԿԱՊԿՈՒ երեխաների անհատական թղթապանակի առկայության և կարևորության վերաբերյալ,

- ըստ անհրաժեշտ տվյալների հավաքագրման կազմել անհատական թղթապանակ միասնական թիմի օգնությամբ,
- անընդհատ թղթապանակը թարմացնել երեխայի կատարած նոր աշխատանքներով, աշխատանքների ընթացքում կատարած տեսանյութերով , լուսանկարներով, որի շնորհիվ կերևա երեխայի առաջընթացը,
- Իրազեկել դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցչի ,որ երեխայի անհատական թղթապանակը ըստ օրենքի անթույլատրելի է փոխանցել երրորդ անձի և որ հավաքագրված տեղեկությունները համարվում են հույժ գաղտնի,
- Հետազուտության նպատակներից ելնելով՝ երեխայի թղթապանակի գաղտնիությունը կարևոր է, քանզի տվյալների հրապարակումը կարող է ավելորդ անհարմարություններ ստեղծել:

Հետազոտության խնդիրները

- Ինչպե՞ս իրազեկել և ճիշտ կազմակերպել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը:
- Ինչպե՞ս կազմել անհատական թղթապանակ:
- Ինչպե՞ս անել, որ ԿԱՊԿՈՒ երեխայի անհատական թղթապանակը հագեցած լինի ոչ միայն անհրաժեշտ փաստաթղթերով , այլ նաև տեսանյութերով և այլ անհատական աշխատանքներով:
- Ինչպես անել , որպեսզի անհատական թղթապանակի գաղտնիությունը լիարժեք ապահովված լինի:

Գլուխ 1.

1 ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄ

Ներառական կրթությունը կրթություն է բոլորի համար: Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Ներառական կրթության հիմքում բոլոր երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին: Անկախ երեխայի ունեցած հաշմանդամության տեսակից և սոցիալական կարգավիճակից , երեխան իրավունք ունի որակյալ և ներառական կրթության: Եթե նրա ունեցոծ դժվարությունները հանգեցրել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի, ապա կրթությունը պետք է արձագանքի այդ կարիքին:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար:

Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և

կարողություններին հարմարեցրած կրթական ծրագրեր և մեթոդներ: Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:

Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը համայնքներում կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ՝ ապահովելով մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթության մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը բոլոր երեխաների որակյալ կրթությունն ապահովելու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ

աշակերտների թվի նվազեցումը): Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը:

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական խորն է արմատավորված: Դրա պատճառներն են՝ այդ երեխաների մասին անբավարար տեղեկատվությունը, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Սխալ կարծրատիպերը բավական դժվար է փոխել, սակայն հնարավոր է: Երեխաները շատ շուտ են ընդունում իրենց հասակակիցների, դասընկերների առանձնահատկությունները և սովորական են վերաբերվում, քան մեծահասակները: Ընդամենը պետք է բարենպաստ մթնոլորտ ստեղծել դպրոցում և երեխաների մեջ խթանել միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանք և իրար աջակցելու պատրաստակամություն: Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կաևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

1.1 ՆԵՐԱՌՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման չափանիշ: Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած սովորողի համարՠ ապահովվում նրա՝ իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթությունը: Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը: Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում էՠ ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ կիրառելով աշխատանքի կազմակերպման տարբեր մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում: Ներառական կրթությունը նախատեսում է, որ դպրոցը կարողանա որակյալՠ կրթություն ապահովել բոլոր երեխաների համար, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան համատեղ սովորելու համար հավասար հնարավորություններ: Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, որի

նպատակներին՝ հասնելու համար ուսուցիչները պետք է առավել հետևողական և ստեղծագործաբար աշխատեն: Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն և մասնակցություն՝ երեք քայլերն են, որ տանում են դեպի իրական ներառում: 11 Կրթական գործընթացում սովորողի ունեցած դժվարությունները կարող են պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը (կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, վերաբերմունքը) կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում: Կարևորն այն է, որ ախտորոշումը, որն ընդգծում էր աշակերտի՝ թերությունները, այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները: Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրները պետք է լուծվեն դպրոցում: Կրթության կազմակերպման գործընթացները պետք է այնքան ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որոնց աշակերտները կարող են բախվել, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող թիմի անդամների հետ համատեղ: Դրա նպատակն է հնարավոր խնդիրների կանխարգելումը՝ առաջարկելով հնարավոր լուծումներ: Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», որոշիչ է այն, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր

սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, կարելի է ասել, որ կաթության որակը բարձր է: Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին: Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան: Սկզբունքորեն այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում, և պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պարտավորությունն է: Ցավոք, բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնում կրթությունից կամ մեկուսացվում են կրթական համակարգում, քանի դեռ ներառական կրթության գաղափարը լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից: Հատուկ դպրոցները, իրենց հիմնականում խոշոր քաղաքային բնակավայրերում կենտրոնացված աշխարհագրությամբ, չեն կարող այս խնդիրը լուծել: Շատ փոքր է այն երեխաների թիվը, որոնց կարելի է առաջարկել, որ սովորեն հատուկ դպրոցներում: Հատուկ դպրոցները չեն կարող առանձնացված ծառայություններ իրականացնել և դրանք պետք է որոշակի դերակատարություն ունենան դպրոցների զարգացման գործընթացում՝ որպես հանրակրթական դպրոցներին աջակցություն տրամադրող ծառայությունների կենտրոններ:

Գլուխ 2.

ԵՐԵԽԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար պատրաստվում է անհատական գործի թղթապանակ, որի մեջ հավաքվում են՝

- գնահատման առաջին և երկրորդ մակարդակների արդյունքների արձանագրությունները,
- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանը՝
- երեխային տրամադրվող ծառայությունների ժամանակացույցը,
- երեխայի զարգացման վերաբերյալ հավաքված և արձանագրած ցանկացած տեղեկատվություն և դրանք հավաստիացնող նյութեր՝
  - լուսանկարներ,
  - տեսանյութեր,
  - երեխայի տետրեր,
  - աշխատանքներ:
  - Օրվա բոլոր գործողությունները, որոնք կապված են երեխային տրամադրված ծառայությունների հետ և լրացվում են ՄԱԾԱՊ-ի համապատասխան բաժիններում, հավաքվում են նաև երեխայի անհատական թղթապանակում:

Դրանց հիման վրա կազմված առաջարկությունները ուսուցիչը հաշվի է առնում հաջորդ օրվա դասի պլանների, մանկավարժական մեթոդների, տեսազննողական պարագաների և անհատական ուսումնական նյութերի՝ սովորողի անհատական կարիքներին համապատասխանեցման ուղղությամբ մշակումների ժամանակ: Երեխայի անհատական թղթապանակը պահվում է ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի մոտ: Թղթապանակի մեջ գտնվող երեխայի անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում այլ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Այն կարելի է ձեռք բերել միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Տարածքային մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնում մանկավարժահոգեբանական ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար 14 ևս, նախքան այդ ծառայություններ տրամադրելը, կազմվում է անհատական թղթապանակ: Այն պահվում է տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալի մոտ: Տարածքային կենտրոնը ևս չի կարող երեխայի անհատական թղթապանակի և նրա անձնական կյանքի տվյալները փոխանցել երրորդ անձի՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձի՝ առանց ծնողի համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հետազոտական թեման ամփոփելով՝ կարող ենք եզրահանգել հետևյալը. յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու իրավունք: Պետք է համակարգը հարմարեցնել երեխաներին ,այլ ոչ թե հակառակը՝ երեխաներին հարմարցնել համակարգին:ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը դպրոցում կազմակերպվում է ԱՈՒՊ-ի հիման վրա, որտեղ առարկաները պարզեցվում են ըստ երեխայի կարիքի: Դիտարկման, ծնողի, ինչպես նաև ուսուցիչների անհանգստության արդյունքում բացահայտվում են ԿԱՊԿՈՒ երեխաները: Այնուհետև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար նախքան աջակցության ծառայություն տրամադրելը, կազմվում է անհատական գործի թղթապանակ (այսուհետև՝ Անհատական թղթապանակ), որը ներառում է երեխայի դպրոցական կամ տարածքային մակարդակների գնահատման արդյունքների արձանագրությունը, ԱՈՒՊ-ը, երեխային տրամադրող ժամանակացույցը, երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրված և արձանագրած ցանկացած տեղեկատվություն և դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկար, անձնական տվյալներ և այլն): Երեխայի անհատական թղթապանակի պատասխանատուները հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով և տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալներն են: Երեխայի անհատական թղթապանակի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձնաց՝ առանց ծնողի համաձայնության:

Դպրոցի տնօրենի և փոխտնօրենի թույլտվությունը ստանալուց հետո, երեխայի անհատական տվյալները պահպանելուց հետո, ուսումնասիրելով դպրոցի ԿԱՊԿՈՒ աշակերտներից մեկի անհատական թղթապանակը, արձանագրեցի, որ այնտեղ բացակայում են տեսանյութեր, լուսանկարներ երեխայի մասնակցությամբ, տետրեր, նրա կողմից կատարած աշխատանքներ:

Կարճ ժամանակում համագործակցելով դպրոցում գործող հատուկ հանձնախմբի, ուսուցիչների հետ, այժմ կատարվում են աշխատանքներ անհատական թղթապանակը բացի անձնական տվյալներից, այլ տեսանյութերով, լուսանկարներով, աշխատանքներով լրացնելու ուղղությամբ:

Գրականության ցանկ

1.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում : Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ Եր:Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն,2018 -150էջ

2.Ներառական կրթությունը Հայստանում:

3. Կարգ՝ ՀՀ օրենքով սահմանված

4. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայության տրամադրման կարգի հաստատման մասին: